



թէ հոգարարութիւնը նոր տեսուչ է փնտրում :

Առաջնորդը նոր-Պարի այդ թիւը բերել տալով հաստատում է, որ Սուսանեանց այդ թիւը թաւրիկ հասնելուց 25 օր առաջ, եւ կամ յօդուածը ապագրուելուց 13 օր առաջ գրել է իր հոգարարը նամակը ուղղուած «Հայուհեաց Բնկերութեան» : Ուրեմն, բանից դուրս է գալիս, որ Սուսանեան սուս է խօսում, խաբուած է առաջնորդին : Պ. Նիկա Սուսանեանց՝ նախկին տեսուչ՝ հայ Գրէյֆիւս՝ առաջնորդարանում խոստովանելով, պոչիկին վրա նայած դուրս է գալիս, եւ լրբաբար ու անամօթաբար խնդրել հարցնողներին պատասխանում է .

—Օյի՛նքաղութեան ենք ելնելու, ես ա՛նկախ պաշտօնեայ եմ . իմ ուսուցչական խումբը պատրաստել եմ արդէն . . . :

Հայ Գրէյֆիւսը իր այս գուռնան անելով կարծէք Օրտանայայի ֆէյֆէն ներկայացնում է իրան պաշտօններին կարգաւորութիւնից ու ինքնիրան հարցնում .

—Արդե՞ք ես եմ այն մեծ մարդը . . . :

ՄԻՐԶՍ.

ԱՐԶԱԳԱՆԳ

—)(—

Գրած էինք արդէն թէ Մանչեսթրի մէջ սկսած է հրատարակուիլ «Վաղուան Չայնը» անունով գրական ամսաթիւթ մը : «Վաղուան Չայնը» արդէն հասած այն կատարելագործման զոր ապագան վերապահած է մարդկութեան, բոլորովին ղերծ կը հըռու չակէ ինքզինքը այն փոքրիկ թերութիւններէն որոնց ենթակայ ըրած են մեզի «երեկը» և «այսօրը» :

Այսպէս, հրատարակիչ խումբակը, թերթ հանելու ախտէն բռնուած չէ . գրական «տիէթիանթիկ» մարմանը մը յագուող տալու մտահոգութիւնը չունի . պայքար չպիտի մղէ . գիտական և այլ պոռոտ յաւակնութիւններ պիտի չունենայ : Բայց ամէն բարենորոգիչ իր նպատակին անսայթաք հասնելու համար, չէ՞ որ անցեալի խութերը պէտք է աւել իր առջեւէն : Ուստի գործի սկսելէ առաջ խմբագրութիւնը մտադրած է մէջ տեղէն վերցնել, նախապաշարուներ, վատութիւններ, սխալ ըմբռումներ, կեղծիքներ, պղտիկութիւններ, զըռնհիւսութիւններ, անիրաւութիւններ, վայրաք ետամոլութիւններ, շինական անտարբերութիւններ պոռնիկ չարութիւններ (և մասամբ նորին) :

Ծրագրելը հսկայ է և իրականացումը տարիներ, գուցէ յաւիտենականութիւն մը կը պահանջէ : Ուստի շատ տարակուսելի է որ մեր արդի սերունդը բախտ ունենայ հասնելու այն օրերուն, երբ արդոյ խմբագրութիւնը ալ ատենը հասած համարի բուն խնդրոյն ձեռք վարներ :

Առաջին ուսմբը խեղճ ձանկիւլեանին վիճակուած է : «Վաղուան Չայնը»՝ «ցաւաբար», խեղճ լմնցած մարդը յորջորջելով զայն, կարի զաւեշտական յօդուած մը կը նուիրէ Գուս-Գափուի հերոսին : Կարգացէք այդ յօդուածը : Բարիզեան սրամտութեան հօսանքներ թափուած են հոն : Եւ յօդուածագրին սրամտութիւնը ձանկիւլեանի դէմ՝ նա մանաւանդ ա՛ն պատճառով շեշտուած կերեւայ, որ ինք՝ Բարիզի մէջ, Չօպանեանի սենեակը գտնուած ատեն, յանկարծ ահարկու «ցաւագարը» իր անհամար խորշոմներով և մարած աչքերով ներս է մտեր «Արջա՛կ, բապուճո՛ւ պուռլով, և այսպէս, խանդարել է գեղեցկագիտական վայելքի հեշտական վայրկեան մը . . . :

Միայն բան մը մտացուած է այդ յօդուածին մէջ . և այդ կէտն այ սա է թէ «ցաւաբարը» իր աչքերուն նուազումը և անթիւ խորշոմները կը պարտի Արիայի բանտերուն, որոնք Չօպանեանի քանարէին չափ փափուկ ըլլալու չեն :

Այս այնպիսի պարագայ մըն է որ «պղտիկութիւններ, զռնհիւսութիւններ» քանդելու յաւակնութիւնով ճամբայ ելնողներու աչքէն վրիպելու չէր . . . :

Աւելի լաւ չէ՞ որ ապագան չը կանխենք և անոր կողմէն հաւատարմատար չկարգենք մենք մեզի վճիռներ արձակելու, մանաւանդ երբ մեր աչքերը բաւական սուր չեն վաղուան խաւերը թափանձելու, որոշելու համար թէ իսկապէս ո՞վ է ցաւաբար, ով անիրաւ, ո՞վ յաւակնոտ . . . :

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

ՆԱՍԱԿ ԽՍԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—)(—

Շարժումի թիւ 60ը Ռուսչուքէն «Արտաւազը» ստորագրութեամբ թըղթակցութիւն մը կը պարունակէր հայ աւետարանական քարոզիչներու այնտեղ գումարած ժողովին նկատմամբ : Պ. թղթակիցը որս : եւ ճշգրիտ լուր մը չէր հաղորդած :

Պատ. Ամիրխանեանց ատենախօսեց «Ճշմարիտ Լուսաստրութեան» վրայ և չէ թէ «Կրօնական գաստիարակութեան» : Թէ Պատ. Ամիրխանեանց ինչպէս լուսարանեց վերոյիշեալ նիւթը՝ «Արտաւազը» չէ կրցած ներկայիլ, ինչպէս չէ յիշած ատենախօսին բուն իսկ նիւթը :

Սխալ է եւ այն թէ, «Երկրորդ ատենախօսութեանէն ետքը, հրաւեր եղած է զիտողութիւն ընելու» : Ծիշքը սա է թէ՛ երբ ժողովը սկսաւ, ատենապետը ժողովին կողմէն որոշ կերպով ծանուց թէ՛ ով որ կը փափաղի մէն մի ատենախօսութեան վերջ զիտողութիւն ընել, թող հաճի իր գաղափարը բովէն յայտնել . սոյն պաշտօնական հրաւերը կրկնուեցաւ ամէն ատենախօսութեանէ վերջ :

Պ. Արտաւազը չէ պարզել թէ ի՞նչ միտքով և ինչ բացատրութեամբ «Ոչ աւետարանական» խօսքը ըսուեցաւ : Այս խօսքը գործածողը, նոյն ինքն նախագահ, իր միտքը բացատրեց օգտակար կերպով . ինչո՞ւ Արտաւազը

զանց կանէ այդ պարագայն : Եղբայրարար խորհուրդ կուսանք իրեն թերի անգեկութիւններով չը պղտորել հասարակութեան միտքը, որպէս զի մի գուցէ ատելութեան որոմը սերմանած ըլլայ մեր սիրիլի ազգայնոց և եղբայրութեան փափագող Աւետարանականաց միջեւ :

Կը փութանք, ընդհակառակն, ծանուցանել թէ ժողովը իր մասնաւոր նիստերէն մէկը նուիրեց հայ աւետարանականաց՝ ազգայնոց հետ ունենալիք յարաբերութեան խնդրոյն, և միաձայն որոշեց կոչելու Ազգային Եկեղեցիին՝ Մայր Եկեղեցիին :

Պէտք է ճշգրիտ ուրիշ կէտ մը եւս : Պ. Արտաւազը կը գրէ թէ Պատ. Ամիրխանեանց «ճնշում» բանեցուց երբ Պ. Գ. Մ. իր զիտողութիւնը կրնէր : Պատ. Ամիրխանեանց, իրբեւ նախագահ, պարտաւորեալ էր կարգապահութեան ընել : Երբ տեսաւ թէ Պ. Գ. Մ. նիւթէն կը շեղի, իր պարտքը կատարեց այս բանը յիշեցնելով ատենախօսին :

Գալով այն ատենախօսութեան զոր խօսեցայ ազգային ընթերցանքին մէջ, անոր բուն ոգին գործիչներ մեղադրելու և գաստապարտել չէր երբեք : Սակայն բացորոշ ըսուեցաւ թէ ու եւ նպատակի, վախճանի համար պիտի և մշակեմք բուն մարդը ի վեզ : Մարդն աննիւթ հոգեբանական տեսակէտով ունի իմացականութիւն զպաշտօնութիւն և կամք : Մարդը օգտակար ըլլալու համար սարողութեամբ պէտք է մշակվի և այնպէս պատրաստելի դործելու : Հակառակ պարագային գրկուած է ճշմարիտ գործունէութեան և ճշմարտապէս գործողի մը հանգամանքներէն :

Երբեք չըսուեցաւ թէ հայ ժողովուրդը պարտաս չէր յեղափոխութեան, «Յեղափոխական վարիչներու անհամապատասխան ընթացք», կամ այլ զիտողութիւններ երբեք իմ բերնէս չեկան : Բայց յստակ ըսուեցաւ թէ բուն գործողներու և նոցա մարմիններու առջեւ ելած են փաստակար անհատներ, արգելք եղած են ուրիշներու գործունէութեան, վասն զի ճշմարիտ գործողը հանգամանքն չեն ունեցած այսպիսիներ :

Ի միջի այլոց, յիշեցի վիճելու և կողուելու ձգտումները մեր թերթերու մէջ՝ որ կերեւան բացասական ուղղութեան զիմակովն :

Այո, գործածեցի իրբեւ փաստ մը թէ վիճելու և կողուելու գործողի մը հանգամանք և յատկանիշ չեն, նոյն ատեն ըսելու զիմակովն թէ բացասական ուղղութիւնը առանց զրականի փաստարկի է :

Մեր թերթերը փոխանակ վէճերով լեցնելու, և խմբագրութեան մը շնորհած ազատութիւնն զեղծելու, խորհուրդ տանք և խորհուրդ աւանանք, որպէս զի ընթերցողները բարոյապէս և մտաւորապէս օգտուին ու մշակուին, որպէս զի ժողովուրդը սովորի փնտել, քննել, խուզարկել և տարակուսել, ոչ թէ տարակուսելու սիրոյն համար, կամ վարանման հաճոյիցը, այլ քննողի մը ճակատով և կայուն սկզբունք մը գտնելու իղձով : Եւ ըսի թող այդ բոլորի շարժառիթը ըլլայ մարդկութիւն :

Ըսուեցաւ նոյնպէս չաճապարենք քննադատելու այն անհատները, որ նիւթապէս կօզնեն, և ոչ թէ ազգեր, ինչպէս թուի թէ ըմբռնած է Արտաւազը :

Ահաւասիկ իմ ատենախօսութեանս բովանդակութիւնը : Արտաւազը շաճազով ընդդիմախօսին ալ պատասխան արուած էր. ինչո՞ւ այդ պատասխանը զանց կանէ այդ պարագայն :

տասխանը զանց ըրած է, դարձեալ չգրեալ :

Բողոքականութիւնը բացասականութեան կրօնքը չէ, որպէս պապականները զրպարտութեամբ կը պնդեն և որպէս կրկնեց Ռուսչուքի ընդդիմախօսը . ոչ ալ մենք կը պարտինք մեր այժմու գոյութիւնը Լուծերի կասկածող ոգոյն, որպէս և կը տեղեկագրէ Պ. Արտաւազը :

Բողոքականութիւնը դրական սկզբունք մըն է և մենք մեր գոյութիւնը կը պարտինք Լուծերի մատնանիշ ըրած դրական ոգիին : Ան նեանց աւանդութիւնը, և Աւետարանի դրական և հաստատական ճշմարտութեանցը շնորհիւ բողոքեց ընդդէմ պապականութեան և ծիսապաշտութեան :

Գրականութեան ծագած բողոքականութիւնը հաստատեց խղճի ազատութիւնը . և զրականապէս ծնունդ տուաւ գաղափարի ազատութեան : Ծրմարտութեան շատագրով ըլլալու պարտականութեամբ միայն կը գրեմ այս պատասխանը և կը խնդրեմ մեր ազգայիններէ, որ առանց կրօնական խորութեան և կուրացուցիչ կողմնակալութեան հետեւողներ ըլլան միութեան և եղբայրութեան :

ՊԱՏ. ՉԱՅԱ ԵԱՐ. ՇՄԵԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԴՐԱՍՏՈՒՆԵՆԹ

—)(—

Յայտնի է թէ ի՞նչ ձևով վիճակի պէտք է մատուցի մեր մէջ նիւթական միջոցներէ զուրկ մարդ մը, երբ անհրաժեշտ պէտքեր մը համար փոխ դրամ ձարելու հարկին մէջ է :

Եթէ երբեք գրաւ դնելու ո՛րէն արժէքաւոր բան մը ունենայ և իրեն փոխ տուող մը գտնուի, շատ անգամ ստիպուած է փոխ առածին չափ ուրիշ գումար մը ևս վճարել իրբեւ տոկոս : Գործնական օրինակներ անպակաս են : Ծատեր փոքր գումար մը փոխ առած ըլլալու մեղքը՝ իրենց տունը և երբեմն բոլոր ունեցածը ծախելով միայն կրցած են քսուել :

Գրամին տոկոսը մեր մէջ նոյն իսկ երջանիկ ընտանիքներ՝ բարեկեցիկ տուններ քանդած է և դեռ շատ պիտի քանդէ :

Սակայն պետք է զիտնալ թէ նոյն բանը չէ նաեւ աւելի զարգացած երկրներու մէջ : Հոն մարդկութիւնը ունեցած է աւելի ճշմարիտ բարեկամներ, որոնք ժողովուրդներու համար օգտակար էստ միջոցներ ստեղծած են և կը շարունակեն ստեղծել :

Եւրոպացի մարդաւէրն ըմբռնած է թէ չբարոյրին օգնելու համար «ոգորմութիւն» տալը եթէ մէկ անաղնիւ գոնէ փաստակար միջոց է : Կարօտ մարդը նիւթապէս ու բարոյապէս բարձրացնելու և անոր ձեռներէցական ձգտումներուն ուժ և մղում տալու համար աւելի նպաստաւոր է իրեն «փոխ տալը» :

Ուստի ժողովրդին բարեկամները դրամ չունեցող մարդո-

համար վարկ մը ստեղծելու, կա-  
րօտին դրամ փոխ տալու միջոց-  
ներուն վրայ խորհեցան և հնա-  
րեցին «վարկի» «գործակցու-  
թիւնը» :

Սպառող գործակցութեան գա-  
ղափարը ծնունդ առած էր Անդ-  
լիոյ մէջ . Ֆրանսացիները յղա-  
ցած էին արտադրող գործակցու-  
թիւնը, իսկ վարկի գործակցու-  
թեան հայրենիքը եղաւ Գերմա-  
նիա . եւ այնուհետեւ դրամին  
տոկոսը փոխանակ տուներ քան-  
գելու տուներ պիտի շինէր :

Գաղափարը իրագործուեցաւ և  
ժողովուրդը հիմնեց դրամա-  
տուններ . Ո՛վ որ իր «սեւ» օրե-  
րուն վարկ մը ունենալ կուզէր,  
կանգամակցէր ժողովրդային դը-  
րամատուն՝ իր վաստակէն մաս  
սու մաս խնայելով ու վճարելով  
որոշեալ բաժնեգին մը 100—200  
ֆր., և կը դառնար դրամատան  
ո՛ր թէ միայն յաճախորդը այլ և  
նոյն իսկ ընկերակիցը :

Պ. Շուլց Տելիշի նախաձեռ-  
նութեամբ 1859ին կազմակեր-  
պեցաւ առաջին «ժողովրդային  
դրամատունը» և միջոցն այնքան  
նպատակաւարմար էր որ ամբողջ  
Գերմանիոյ ժողովուրդը գիտցաւ  
օգտուիլ անկէ :

Բայց մի կարծէ՛ք թէ այդ վեհ  
գաղափարը սահմանափակուեցաւ  
միայն Գերմանիոյ մէջ : Եւ ծա-  
ւալեցաւ նաեւ Ռուսիա, Իտալիա  
և Պեճիքա, ուր սքանչելի ար-  
դիւնքներ արտադրեց :

Սակայն պէտք է յիշել թէ  
նոյնքան բախտաւոր չեղան նաեւ  
Անգլիոյ և Ֆրանսայի ժողովուրդ-  
ները, վասնզի այդ երկիրներու  
մէջ տիրող անխիղճ վաշխառու  
դրամատէրները զօրաւոր խոշըն-  
գոտներ յարուցած էին վարկի  
գործակցութեան դէմ :

Ռուսիոյ մէջ 1879ին 323 ժո-  
ղովրդային դրամատուններ կա-  
յին ամէնքն ալ յաջող վիճակի  
մէջ : Նոյն թուականին 137 իտա-  
լական դրամատուններ 71 միլիոն  
ֆր. դրամագլուխ ունէին, 260  
միլիոն ֆր. գոյք և 7,350,000  
ֆր. տարեկան շահ :

Պեճիքայի ժողովրդային ան-  
դրանիկ դրամատունը հիմնուած  
էր 1864ին և 1892ին արդէն ամ-  
բողջ երկրին մէջ կը գործէին 21  
դրամատուններ, որոնք 10,356  
անդամ ունէին, 2 միլիոն ֆր. է  
աւելի դրամագլուխ, 270,000 ֆր.  
պահեստի գումար և տարեկան  
150—160 միլիոն ֆր. փոխառու-  
թիւն :

Սակայն այդ ժողովրդային դը-  
րամատունները ամենէն աւելի  
ճոխացան և ծաւալեցան Գերմա-  
նիոյ մէջ : 1874ին անոնց թիւը  
հասած էր 2639ի, որոնցմէ մի-  
այն 815ը 400,000 անդամ ու-  
նէին և 450 միլիոն մարք դրա-  
մագլուխ . 1649 միլիոն մարքի  
փոխառութիւն ըրած էին և ի-  
րենց զուտ վաստակը եղած էր  
տարեկան 7,750,000 մարք : Իսկ

1889ին հրատարակուած վիճա-  
կագրութենէ մը տեսնուեցաւ թէ  
ամբողջ Գերմանիոյ մէջ ժողո-  
վրդային դրամատանց թիւը  
բարձրացած էր 5,000ի, որոնք  
մօտ 2,000,000 անդամ ունէին,  
տարեկան 3 միլիար մարքէ աւելի  
փոխառութիւն, 300 միլիոն  
մարք դրամագլուխ և 500 միլիոն  
մարք պահեստի դրամ :

Սրդէն ինքնին հասկնալի է  
թէ այնտեղ, ուր ժողովուրդն իր  
դրամատունը ունէր, վաշխառու  
դրամատէրը՝ մարդկային ընկե-  
րական ու նրթական բարօրու-  
թեան ցեցը ի հարկէ ազատ սա-  
պարէզ չպիտի ունենար մարդ-  
կութեան կարօտութիւնը շահա-  
գործելու և, աւելորդ է բացատ-  
րել թէ ժողովրդի կեանքին վրայ,  
ի՞նչ փրկարար ազդեցութիւն  
պիտի ունենային՝ իր տրամա-  
դրութեան ներքեւ ունեցած այդ  
ահադին միլիոնները :

Իսկ մենք բոլոր այդ պատկա-  
ռելի թուանշանները կարդալով  
կը հիանանք անշուշտ . սակայն  
այդքանը բաւակա՞ն էր արդեօք,  
և միթէ աւելի հիանալի չէ՞ր ըլ-  
լար եթէ մենք գիտնայինք ինչ՞ի  
մտօք հետեւիլ նաեւ իմաստուն  
և արուստեղներու մարդասիրական  
ու յառաջդիմական ձեռնարկնե-  
րուն, ինչպէս սովորութիւն ու-  
նինք հետեւելու նոյն ւրոպայի  
ապականուած բարքերէն մեզ  
փոխանցուած կարգ մը «մօտա»-  
ներուն, որոնք աւելի եւս կը  
նպաստեն փճացնելու մեր արդէն  
իսկ քայքայուած եւեւմուքը :

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱ՛

ՔՐՈՆՆԻԿ

—(—)

Տփիսխաբնակ Ալէլեանները  
յանձն առեր են իրենց ծախքով  
մշտապէս զրկելու Գէորգեան ճե-  
մարանէն ելած սարկաւազները  
կարգաւ Ռուսաստանի համալսա-  
րանները : Այս առատաշնորհու-  
թենէն առաջին անգամ օգտուած  
է Ներսէս Սարկաւազ Տ. Միքա-  
յէլեանց որ իբր ամենէն արժա-  
նաւոր, Մոսկուա զրկուեցաւ ի-  
րաւաբանութիւն ուսանելու :

—Վանայ առաջ. Տեղապահին  
տեղեկագիրը ընդունելով, Կրօ-  
նական ժողովը համոզում գոյա-  
ցուցեր է թէ Տոմիլիկեան բե-  
ռերու կրօնափոխական յաջողու-  
թիւններու պատճառը չէ թէ հո-  
վիւի պակասութիւնն է և կամ  
ժողովուրդին հոգեւոր խնամքէ  
զուրկ մնալը, այլ անոնց բաշխած  
նպաստները որոնք այնքան ա-  
ռատ են Պատրիարքարանի զըր-  
կած վտիտ օգնութեանց հետ  
բաղդատմամբ :

—Չարսանճագի Մկրտչական  
բողոքականները նորադանդներ  
չահելու համար ամէն տեսակ  
հրապուրիչ խայծեր կը շնորհեն :  
Ամուսնութեան համար մասնաւոր  
գիւրութիւններ : Եղբօր հետ կա-

մուսնացնեն իր հանգուցեալ եղ-  
բօր այրի կինը . նորութիւն մը  
զոր ամենէն ներողամիտ եկեղե-  
ցին անգամ չէ ընդունած : Նաեւ  
չափահաս օրիորդներ, կիներ և  
երիտասարդներ մօրէ մերկ կը  
մկրտեն եղեր :

—Կըսուի թէ Յակօբ Աշոտ վար-  
դապետը էջմիածին պիտի եր-  
թայ Եգիպտոսի հայերուն համար  
Ս. Միւռոն բերելու, և այդ առ-  
թիւ պիտի եպիսկոպոսանայ,  
երկու գործ մէկ անգամէն կա-  
տարած ըլլալու համար :

—Միացեալ Ընկերութեանց  
վիճակը արդահատելի է : Խնա-  
մակալութիւնը հասոյթներ գո-  
յացնելու անկարելիութեան առ-  
ջեւ յուսահատած, հրաժարեր է,  
բայց Պատրիարքարանը մերժեր  
է այս հրաժարականը և նպատ  
մը ընել խոստացեր է կրթական  
այս օգտակար գործը բոլորովին  
չընդհատելու համար :

—Ռուսահայ Պ. Ջանչեանց գու-  
մար մը գրած է Պատրիարքին  
տրամադրութեան տակ . Այս գու-  
մարով որոշուած է որբանոց մը  
բանալ Բալուի Գաղղրահայեաց  
Վանքին մէջ :

—Բարեբոգէ ճամբայ հանուած  
են երկսեռ որբեր, որոնք Իլմիլի  
Ներսէսեան որբանոցին մէջ պիտի  
խնամուին Մանչէթէրի հայերուն  
ծախքով :

—Վիլենայի Մկիթարեանց  
Աբբահայր Այտընեան Արքեպիս-  
կոպոսը ներկայ գտնուեր է էլի-  
զապէթ կայսրուհիին յուզարկա-  
ւորութեան :

—Փաստաբան Աւետիս էֆ. Սու-  
րէնեան նամակ մը գրելով Պատ-  
րիարքին, յայտնեց է թէ ինք  
իբր հայ անհատ, Գարակէօզեան  
կտակին օրինաւորութիւնը հաս-  
տատելու համար դատ պիտի բա-  
նայ ճէրիի դատաւորին առջեւ,  
եթէ իսկոյն Պատրիարքը պաշտօ-  
նապէս չը յայտարարէ թէ երբեք  
և ոչ մէկ պայմանով կտակագիրը  
ետ չպիտի տայ ժառանգորդնե-  
րուն :

—Պատրիարքարանի լուր տըր-  
ուած է թէ Վանայ մէջ ասկէց ա-  
ռաջ ազատ արձակուած հայ բան-  
տարկեալներէն զատ, ուրիշ 11  
հոգիներ ալ անպարտ արձակուե-  
ր են խիստ դատաւարութեան մը  
ռաժանքները կրելէ ետքը :

—Գայթակղեցուցիչ և ցաւալի  
լուր մը կը հասնի Ամերիկայէ :  
Մաշտոց վարդապետը Ռուսերի  
եկեղեցիէն առեր քալեր է իր  
հետ տանելով եկեղեցական ա-  
նօթները և սպասները : Կըսուի  
նաեւ թէ . . . ամուրի եկեղեցա-  
կանութեան դրութիւնը բառնա-  
լու կուսակից ըլլալով, առանց  
այլ եւ այլութեան առաջին փորձը  
իր անձին վրայ տուեր է :

—Բոլոր այն դատաւները, ուր  
կաթողիկոսը այցելած էր իր  
վերջին ուղեւորութեան միջոցին՝  
բարեբեր անձրեւներ տեղացեր  
են : Գեղացիները ցնծութեան

մէջ են . իրենց հաստատ համո-  
զումն է թէ հունձքերու առա-  
տութիւնը կը պարտին հայրապե-  
տական «խէրով ու քին» :

—Կ. Պոլսէն ռուսական թերթի  
մը կը գրեն թէ Բաղէշի վիլայե-  
թին մէջ քանի մը հայեր սպան-  
նուեր և հայկական գեղ մը այ-  
րեր են : Ռուսական և ֆրանսա-  
կան զեսպանները իսկոյն յիշա-  
տակագիր մը ներկայացուցեր են  
Դրան՝ որպէս զի հայերու սպահո-  
վութեան համար միջոցներ ձեռք  
առնէ և նահանգապետը պաշ-  
տօնանկ ընէ : Դուռը հնազանդած  
է զեսպաններուն պահանջնե-  
րուն : Միւս կողմէ Պատրիարքը  
Երլաբլի Պալատը հրաւիրուեր  
է . և քարտուղար Թագսիմ պէյ,  
Պատրիարքին ցոյց տալով հայե-  
րու կատարած կարգ մը անկար-  
գութիւնները, խնդրեր է որ իր  
ազդեցութիւնը ի գործ գնէ իր  
ազգակիցներուն վրայ . . . :

—Պոլսոյ թերթերը կը հաղոր-  
դեն թէ Գերմանիոյ զանազան  
քաղաքներու մէջ հայ կիներու և  
օրիորդներու ձեռագործներով  
ցուցահանդէսներ բացուած են ու-  
րոնք մեծ յաջողութիւն կը գըր-  
նեն :

ԱՅԻ ԼԵՁՈՒՆ

Պուրկարիոյ զանազան քաղաք-  
ները շրջող պոլսեցիին, ցաւօք և  
եթէ ներքի է այսպէս ըսել, զըզ-  
ուանքով կը լսէ երկու սեռէ  
փոքրիկ հայ մանկտիկներու թըր-  
քերէն լեզուով խօսակցիլը : Այս  
յաւէտ ատելի լեզուն է զոր ա-  
նոնք կը գործածեն իրենց ման-  
կական բոլոր խաղերուն մէջ,  
այնպիսի առողջանութիւնով մը որ  
անվարժ ունկնդիրը ինքզինքը  
թըրքական ամենէն թարձր խա-  
ւին մէջ կը կարծէ, և երբեք  
մաքէն չանցնիր թէ այդ փոքրիկ  
սիրելի զաւակները Հայկայ ա-  
րունդին շառաւիղներէն են :

Թողլով չափահաս երիտասար-  
դութիւնն որ նոյնպէս երբեմն,  
մուսուսան վայրկեաններու մէջ,  
նոյն բարբառով իր շուրթերը  
կարատաւորէ, ջերմապէս կը  
յանձնարարենք ուսուցիչներուն  
և ուսուցչուհիներուն որ իրենց  
ուշադրութեան առարկայ ընեն  
լեզուական այս խնդիրը, որ եթէ  
չարունակուի, ի հարկէ մեծապէս  
կը տկարացնէ այն աքիւնքները  
զոր իրաւամբ կը սպասենք իրենց  
տուած աշխատութենէն :

Ա Ձ Դ

Կը խնդրուի այն ազգայիններ-  
րէն որոնք կը ճանչնան խա-  
զիւղցի քարահոփ Տ. Յովհաննէս  
Ռափայէլեանը և գիտն անոր  
ուր տեղ գտնուիլը, որ հաճին  
լամբագրութեանս իմացնել :

—(—)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

Ֆ Ա Շ Օ Տ Ա

Ափրիկէն և Ասիան այն երկու ընդարձակածաւալ աշխարհներն են ուր եւրոպեան մեծ պետութիւնները, օգտուելով նոյն տեղերու կառավարութեանց ապիկարութենէն, կամ հիմնական պակասութենէն, հոն, հոս իրենց ազգային դրօշը տնկած են առանց երկար բարակ այլևայլութեան: Ընդարձակ աշխարհներ կը պատկանին անոր՝ որ աւելի ճարպիկ գտնուի, աւելի կանուխ արթննայ: Այս ճարպիկութիւնն է որ շահեցուցած է Անգլիոյ գաղթային երկիրները, Հնդկաստանը Եգիպտոսը, և այլն: Անգլիոյ օրինակին հետեւելու չուշացան նաեւ միւս ազգերը: Փրանսսա, Ռուսիա, Գերմանիա հետզհետէ մեծ կտորներ ձեռք ձգեցին: Այնպէս որ ներկայ ժամանակներու մէջ կրնանք ըսել թէ կոյս, անատիւնը երկիրները այնքան նուազած են, որ պետութիւնները իրենց խօսական փնտռութիւն մէջ սկսած են իրարու զարնուիլ:

Փառասան Օմտուրմանէ իբր 600 քիլոմէթր հեռու տեղ մըն է: Փրանսական արշաւախումբ մը հարիւրապետ Մարշանի հրամանին տակ, վերջերս առաջինն հոն հասած՝ և ընդունուած սովորութեան համեմատ զայն ֆրանսական ստացուածք հռչակած է: Փառասան ինքնին անշուշտ մեծ կարեւորութիւն չունի. բայց Անգլիոյ հաշիւներուն բնաւ չի յարմարիր որ այդ տեղը օտար պետութեան մը պատկանի, սա պատճառով որ Անգլիան Օմտուրմանը գրաւելով գլխաւոր նպատակ ունէր ճամբայ մը բանալ մինչեւ Բարեյուսոյ գլուխը, և Փրանսան՝ Փառասան գրաւելով, ճիշդ այդ ծրագիրը խափանած եղաւ:

Ահա այս է արդի նոր խնդիրը Անգլիոյ և Փրանսայի մէջ. իբնդեր՝ որ եթէ փոխադարձ շփոթութիւններով չվերջանայ, պատերազմի ամենալուրջ պատրուակ մը կրնայ կազմել:

ԿՐԻՏԷԻ ԳՈՐԾԵՐԸ

Թուրք կառավարութեան Կրէտէի խնդրի մասին բազմաթիւ շրջաբերկաններով ըրած բոլոր առաջարկներն ալ տէրութեանց կողմէ մերժուած են: Վերջին առաջարկը սա եղած է որ միւսլիման յանցաւորները Տրիպոլիս արտորուին և Կրէտէի քրիստոնեայններուն ալ զէնքէրը ժողովուն: Նաեւ մէջ բանտարկուած իսլամ պատամբներուն թիւը հետզհետէ կաճի. բայց ամենէն կարեւոր պարագլուխները զեռչեն ձերբակալուած. ասոր համար, նոյն ծովակալը, 25 անուններ պարունակող յանցաւոր-

ներու նոր ցանկ մը զրկած է էտհէմ վաշահն:

Չինթափութեան զորքը կը շարունակուի: Երկու հաշարէ աւելի միւսլիմանական զէնքէր յանձնուած են արգէն անդլիացիներուն, որ զանոնք զետեղած են, նաև հանգստին բերանը իրենց հսկողութեան տակ դտնուող ամբողջին մէջ: Չորս պետութիւնները կը շարունակեն ճնշել թուրք կառավարութիւնը կրէտական հարցին մէջ. նոյն իսկ կըսուի թէ Գերմանիա և Աւստրիա, թէ և բոլորովին չպիտի աշակցին եւրոպական ջանքերուն, սակայն պիտի զգուշանան Սուլթանական յաւանդատութիւններուն ուժ տալէ: Պուսոյ մէջ ցատու մը սաստիկ է անգլիացիներու դէմ: Եւ այս ցատու մը ա՛լ աւելի սաստկացած է սա պատճառով որ Անգլիա առանց Սուլթանին կարեւորութիւն տալու շիտակ շիտակ էտհէմ փաշայի հետ բանակցած է: Խորին սպաւորութիւն թողած է նաեւ սա պարագան որ Անգլիան հրաժարելով միւս պետութեանց աջակցութենէն, յանձն առած է ինքնին կատարել կղզին բարեկարգելու և կառավարելու գործը:

Այսպէս թէ այնպէս, անշուշտ մօտ է այն օրը ուր կրէտական խնդիրը իր վերջնական կամ գէթ տեւական ձեւը պիտի ստանայ: Միայն թէ կղզին իսլամ ազգաբանկութիւնը որ հարիւր հազարի կը մօտենայ, գլխաւոր արգելքներէն մէկն է կղզին տալու յարմարագոյն վարչութիւնը: Ատոր համար, առաջարկներ եղեր են որ այդ թուրքերը, ոչխարներու հօտի պէս... Փոքր Ասիա փոխադրուին: Եթէ այդ յիմար առաջարկը իրականայ, ահա ձեզ գիշտտիչներու լեզուն մըն ալ դժբախտ հայաստանցիին գլխուն, իբր թէ բաւական չըլլային քրդերը, լազերը, չէրքէզները և ուրիշ վայրենի ցեղերը որոնցմէ այնքան կը սառապի:

Անգլիացի զննապետ Սըր Հէրպէրթ առաջարկած ըլլալով իզմիրի մէջ մասնաւոր դատարանի մը կազմութիւնը յանցաւորները դատելու համար, ծովակալները ժողով գումարեցին խնդիրը քննելու: Այս առաջարկը մեծ յուզում առաջ բերած է Կրէտացիներուն մէջ: Ռուս ծովակալը առաջարկեց ամբողջ Կրէտացիներուն զինթափութիւնը: Հալէբաի ֆրանսական և ռուսական հիւպատոսարանները երեկուրէն ի վեր հսկողութեան տակ առնուած են:

Քանի մը օր առաջ պատամբները վարձեալ անգլիացիներուն վրայ զէնք պարպելով, քանի մը հոգի սպաներ են: Մարդասպանները ձերբակալուած են:

ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Կըսուի թէ Չինաստանի կայսրը սպանուեր է:

Պոռտուէն կը հեռագրէն թէ Լուիսի մէջ ծով իջեցուցէր են նատէժտա անուն պուկարական նոր մարտանաւը:

Չիւռլէնտէն զօրավարը վերահաստատուեր է իր պաշտօնին մէջ իբրեւ Բարիզի զինուորական կառավարիչ:

Վիլհելմի քաղաքակրօնական այցելութեան առթիւ, Սուլթանը մեծ ծախքերով Երլուզի պարտէզին մէջ նոր և շքեղ պալատ մը կառուցանել կուտայ իր օգոստափառ պաշտպանը ընդունելու համար:

«Թայմզ»ի Բէթէրպուրկի թղթակիցի կը գրէ թէ՝ հրեայ նախկին սեղանաւորի մը հեղինակած «Ապագայ պատերազմը» անուն կարեւոր գրքին ընթերցումն է որ զէնքնկեցութեան առաջարկը ընելու գաղափարը ներշնչեր է Չարին:

Իտալիա առաջարկած էր միջազգային համաժողով մը գումարել անիշխանականութեան դէմ միջոցներ ձեռք առնելու համար: Բոլոր տէրութիւնները յափշտակութեամբ ընդունած են այս առաջարկը: Ժողովը պիտի գումարի հոկտեմբերի մէջ:

Մովակալ Սէրվէրա, որ այնքան տխմարօքն ինքզինքը Սանդիակոյի ծուղակը ձգած և յետոյ փառաւոր պարտութեամբ մը ամերիկացիներուն ձեռքը գերի ինկած էր, Մասարիտ վերադարձած է:

ՖՐԱՆՍԱ

Ֆրիլպ տ'Օուլեան դուքսը կրակոտ յայտարարութիւն մը հանած է որով սաստիկ կը պախարակէ Փրանսական կառավարութեան ընթացքը Տրէյֆուսի գործին մէջ, և վերաքննութիւնը՝ ֆրանսական բանակին ուղղուած մեծագոյն նախատինքը կը նկատէ: Հետզհետէ բացորոշ կերեւայ թէ Տրէյֆուսի գործը արդարաօրական կամ մարդասիրական հանգամանքէն բոլորովին զուրկ էրկրորդ պուլանձէականութիւն մը, սուր զէնք մըն է Հանրապետութեան և կառավարութեան ամէն կարգի թըշնամիներուն ձեռքին մէջ: Հըրաշք է եթէ երրորդ Հանրապետութիւնը յաջողի այս սագնապէն ողջ առողջ դուրս գալ:

Գնդապետ Բիքառ այն չարածիճին է որ փաստափան Լըպլուաի միջոցով Մերակոյտի նախագահ Պ. Բէրէր. Բէտտէրի հաղորդած էր Տրէյֆուսը դատապարտող թղթերուն անվաւերականութիւնը: Գնդապետը բանտարկուած և դատի յանձնուած էր ազգային պաշտպանութեան վերաբերեալ գաղտնիքներ երեւան հանած ըլլալուն համար:

Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆրիլպէ Տ. Անտուանի մօտ, Ռուսչուքէ Հայկ Մալախեանի սրճարանը, Սօֆիա՝ Տ. Մուշկե Արժուրիի քով:

Մտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Ռուսութեան գոհերը»:

ՎԱՐՊՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ  
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)  
—) (—  
( Գին 1 Փրանգ )

Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆրիլպէ Տ. Անտուանի մօտ, Ռուսչուքէ Հայկ Մալախեանի սրճարանը, Սօֆիա՝ Տ. Մուշկե Արժուրիի քով:

Մտերս մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Ռուսութեան գոհերը»:

ՊՕՐՍԱ

Վառնա 15 Ակսեւրն  
ՊՈՒՂՏԱՅ  
Վախօն, լիպրա 55—58, հէքթօր 9.20—9.80 ֆրանք  
Արապա, լիպրա 55—60 հէքթօր 9—12 ֆրանք  
ԱՐԲԱ  
Լիպրա 42—50 հէքթօր 5.20—5.80 ֆրանք  
ԵՈՒՍԱՅ  
Կիւնտէ 8—10 արապա կէլմէքտէ տիր 4—4.40 ֆրանք

ՏԱՐԸ  
Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տիր 58—60 լիպրա, 4.60—5 ֆրանք  
ՖԱՍՈՒԼԵՍ  
Կիւնտէ 70—80 արապա կէլմէքտէ տիր 100 օգգասը 15—21 ֆր. մալա կէօքէ  
Առապա մուամէլէսի նաբօլէսն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.  
Կիւնտէ 15—20 վախօն, 200—250 արապա պուզտայ, 70—80 արապա արբա կէլմէքտէ տիր:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԵՆՏՈՒՄԻ  
Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակագրուի, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաեւ պրօշիւներ:

Գիններն յոյժ դիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
Ս. ՍԱՊԱՆ-ԳԻԼԵԱՆ  
—) (—  
ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ  
ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏԵՑ  
—) (—  
Գին 1 Փրանգ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնայի մէջ և Վառնայի Մուսալա, թահափի Կեղիպէօյլի քանի խանութը, և Ապաիւրրահման մզկիթին գէմը հայկական գրատունը, Ա. Չարպահանլեանի քով:

Печангига „Взаимность“ Варна.